ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / ПУБЛИЧНОЕ ПРАВО / PUBLIC LAW

ՄԱՆԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր

MANASYAN ANAHIT
Candidate of Legal Sciences, Associate Professor,
Vice-Rector of Academy of Justice of Armenia

МАНАСЯН АНАИТ
кандидат юридических наук, доцент,
проректор Академии юстиции Армении

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ*

PECULIARITIES OF SOLUTION OF CONSTITUTIONAL CONFLICTS AT THE REPUBLIC OF ARMENIA CONSTITUTIONAL COURT*

ОСОБЕННОСТИ РАЗРЕШЕНИЯ КОНСТИТУЦИОННЫХ СПОРОВ В КОНСТИТУЦИОННОМ СУДЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման իրավական կառուցակարգերն ու դրանց պատշաճ կենսագործումը բացառիկ կարևորություն ունեն սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը երաշխավորելու տեսանկյունից:

Բնական է, որ սահմանադրական մարմինների կողմից իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման ընթացքում անխուսափելի են միմյանց հետ անընդհատ փոխհարաբերությունները: Ավելին՝ դրանք հաճախ պայմանավորված են լիազորությունների խաչաձևման, որոշակի մարմնի լիազորության իրացումը մեկ այլ մարմնի լիազորության իրացմամբ պայմանավորված լինելու և այլ նմանատիպ հանգամանքներով: Արդյունքում՝ անխուսափելի են նաև տարատեսակ մարմինների միջև հնարավոր տարաձայնությունները նշված լիազորությունների առնչությամբ, որոնք մասնագիտական գրականության մեջ քննարկվում են «վեճ» հասկացության ներքո:

Բանասիրական իմաստով «վեճ» հասկացությունը բնութագրվում է որպես մրցակցություն, որի շրջանակներում կողմերից յուրաքանչյուրն իր կարծիքն է պնդում[1]: Իսկ դասական կոնֆլիկտաբանությունը վեճը ներկայացնում է որպես անհատների կամ խմբերի փոխազդեցություն, որը, մի կողմից, դրսևորվում է որպես այդ փոխազդեցության մասնակիցների հակազդեցություն, իսկ

* Հոդվածը ներկայացվել է 24.08.2018, գրախոսվել է 15.04.2019, ընդունվել է տպագրության 20.06.2019:
* The article was presented 24.08.2018, was reviewed 15.04.2019, was accepted to publication 20.06.2019.
* Статья представлена 24.08.2018, рецензирована 15.04.2019, принята в печать 20.06.2019.

[1] Տե՛ս Ушаков Д. Толковый словарь русского языка Ушакова. 2012, https://slovar.cc/rus/ushakov/455507.html:

մյուս կողմից, որպես նրանց միջև տեսակետների, շահերի առնչությամբ առաջացող հակասությունների լուծման միջոց՝ սոցիալական փոխազդեցության պոզիտիվ գործընթացի շարունակման նպատակով[1]:

Այդ առումով նշենք, որ, մեր կարծիքով, նմանատիպ վեճերի լուծման քաղաքակիրթ ճանապարհը իրավական հարթությունում դրանց հաղթահարման հնարավորությունն է: Պատճառն այն է, որ, ինչպես նշեցինք, իշխանության իրացման ընթացքում հիշյալ վեճերի առաջացումն անխուսափելի է, ուստի անխուսափելի է նաև վերջիններիս լուծման համար հնարավորությունների փնտրտուքը: Հետևաբար, ակնհայտ է, որ քննարկվող վեճերի հաղթահարման իրավական ճանապարհների բացակայության պայմաններում դրանց լուծման համար, այսպես թե այնպես, գտնվելու են լուծումներ, սակայն վերջիններս փնտրվելու են սոսկ քաղաքական հարթությունում, «կուլիսների հետևում»: Այդ է պատճառը, որ բազմաթիվ երկրներում նախատեսված են նմանատիպ վեճերի լուծման իրավական հնարավորություններ, մասնավորապես, սահմանադրական դատարանների կողմից վերջիններիս քննարկման և լուծման հնարավորություն: Որպես օրինակ կարելի է հիշատակել Գերմանիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունգարիայի, Չեխիայի, Իտալիայի, Լեհաստանի, Սլովենիայի, Ադրբեջանի, Իսպանիայի և որոշ այլ երկրների սահմանադրական դատարանների կողմից սահմանադրական վեճերի լուծման առանձին լիազորության իրականացման հնարավորության առկայությունը[2]:

Հիշյալ համատեքստում կարևոր է նկատի ունենալ, որ նույնիսկ այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանը չունի սահմանադրական մարմինների միջև քննարկվող վեճերը լուծելու առնչությամբ առանձին լիազորություն, վերջինս հաճախ անդրադառնում է նման վեճերի՝ իր այլ լիազորությունների իրացման շրջանակներում: Ավելին, հիշյալ ինքնուրույն լիազորության առկայության պայմաններում էլ նման գործերի քննության պրակտիկան էականորեն տարբերվում է տարատեսակ երկրներում:

ՌԴ Սահմանադրական դատարանն, օրինակ, օժտված լինելով իրավասության հարցերով վեճերի լուծման ինքնուրույն լիազորությամբ, ունի հիշյալ գործերի քննության չափազանց սահմանափակ պրակտիկա: 2017թ. դրությամբ վերջինս կայացրել էր հիշյալ գործերով սոսկ մեկ ըստ էության որոշում: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը լուծել է սահմանադրական մի շարք վեճեր իր այլ լիազորությունների իրականացման շրջանակներում[3]: Հիշյալ գործերով բավականին սահմանափակ դատական պրակտիկա է առկա նաև Ավստրիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլն[4]:

Առանձին երկրներում Սահմանադրական դատարանի հիշյալ լիազորությունն ունի կարևոր նշանակություն սահմանադրական վեճերի հաղթահարման տեսանկյունից, ուստի, առկա է նաև նշված գործերի քննության բավականին հարուստ պրակտիկա: Ռումինիայում, օրինակ, 2017թ. դրությամբ իրավական վեճերի լուծման հարցով Սահմանադրական դատարան է ներկայացվել 26 դիմում, որոնցից 14-ում որպես վեճի կողմ է հանդես եկել Ռումինիայի Նախագահը: Ընդ որում՝ Սահմանադրական դատարանը նշված 14 գործերից միայն 5-ի դեպքում է արձանագրել սահմա-

[1] Տե՛ս Маврин С. Роль Конституционного Суда Российской Федерации в урегулировании конституционных конфликтов // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջ 79:

[2] Տե՛ս Հարությունյան Գ., Մանասյան Ա. Սահմանադրական վերահսկողություն. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար (լրամշակված վերահրատարակություն): Երևան, Իրավունք հրատ. 2015, էջ 137:

[3] Տե՛ս Маврин С. Роль Конституционного Суда Российской Федерации в урегулировании конституционных конфликтов // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջեր 79-92:

[4] Տե՛ս Тохян Ф. Роль и полномочия органов конституционного правосудия в решении компетенционных споров (практика Армении и международный опыт) // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջ 131:

նադրաիրավական վեճի առկայություն[1]: Սլովենիայի Սահմանադրական դատարանը միայն 2005թ. ընթացքում լուծել է իրավասության հարցով 60 վեճ[2]: Մասնագիտական գրականության մեջ հիշատակվում է նաև Իսպանիայի Սահմանադրական դատարանի օրինակը, որը, լուծելով պետության և ինքնավար համայնքների միջև վեճերը, արդյունավետորեն արբիտրի դեր է կատարել պետության և ինքնավար համայնքների միջև հայտնի լարվածությունը մեղմելու տեսանկյունից[3]:

Մինչ 2015թ. սահմանադրական փոփոխությունները ՀՀ Սահմանադրական դատարանը չուներ սահմանադրական վեճերի լուծման ինքնուրույն լիազորություն: Միևնույն ժամանակ, իր այլ լիազորությունների իրականացման համատեքստում վերջինս առանձին դեպքերում փաստացի լուծել է լիազորությունների հարցով վեճեր: Օրինակ՝ 28 մարտի 2017թ. ՍԴՈ-1359 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն ըստ էության լուծեց ՀՀ գլխավոր դատախազի և Վճռաբեկ դատարանի միջև վեճ՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ» դրույթում «եզրափակիչ մասում» բառակապակցությունը այնքանով, որքանով դրա առկայության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքի շրջանակներում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները դատական պրակտիկայում հիմք չեն ընդունվում բողոքի ընդունելության և քննության շրջանակներում: Հիշյալ գործով Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեցին նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետում և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նախատեսված **«եզրափակիչ մասում»** բառակապակցությունները, քանի որ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված բովանդակության շրջանակներում նման ձևակերպման առկայությունը նոր հանգամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելիս վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձին հնարավորություն չէր տալիս իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչել Սահմանադրական դատարանի որոշման այլ մասերում (բացի եզրափակիչ մասից) արտահայտված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները, ինչը հաշվի պետք է առնվի բողոքը քննելիս[4]:

ՀՀ Սահմանադրական դատարանը 04.02.2011թ. ՍԴՈ-934 որոշմամբ ըստ էության լուծել է իրավասության հարցով վեճ դատախազության և դատական իշխանության մարմինների միջև: Ավելին, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան, գտնում է, որ ստեղծված իրավիճակը դասական առումով պետական իշխանության մարմինների միջև

[1] Տե՛ս Simion M. Constitutional Legal Disputes between the President of Romania and Other Public Authorities in the Case-Law of the Constitutional Court of Romania // Agora International Journal of Juridical Sciences, N 2 (2017). Agora University Press, Oradea, Romania, էջ 90:

[2] Տե՛ս CDL-JU (2005)066, "Disputes Regarding the Competences Between the State Powers Before the Constitutional Court – International Experience", by Mavcic A., Strasbourg, 8th January 2006, http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf =CDL-JU(2005)066-e (Վերջին մուտք՝ 10.08.2018):

[3] Տե՛ս Тохян Ф. Роль и полномочия органов конституционного правосудия в решении компетенционных споров (практика Армении и международный опыт) // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջ 131:

[4] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 28 մարտի 2017թ. ՍԴՈ-1359 որոշում:

սահմանադրական լիազորությունների շուրջ ծագած վեճ է, որը, որպես կանոն, պետք է լուծվի բացառապես սահմանադրական դատարանների կողմից՝ վերջիններիս Սահմանադրությամբ նախատեսված համարժեք լիազորության առկայության պարագայում: ՀՀ Սահմանադրական դատարանը նման լիազորությամբ օժտված չէ, ինչը նաև խոչընդոտում է Սահմանադրության գերակայության լիարժեք երաշխավորումը: ՀՀ Սահմանադրական դատարանն այս հիմնախնդրին անդրադարձել է նաև իր տարեկան հաղորդումներում:

Ելնելով հիմնախնդրի կարևորությունից ու արդարադատության արդյունավետության երաշխավորման անհրաժեշտությունից, նկատի ունենալով, որ վեճի առարկայի շրջանակներում հակադիր մոտեցումները հիմնավորելիս վկայակոչվում են ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով հիշյալ գործի քննության կոնկրետ առանձնահատկությունները և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ ՀՀ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում անդրադառնալ սույն վեճի առարկային՝ թե՛ ըստ ձևի և թե՛ ըստ բովանդակության վերահսկողության շրջանակներում»: Արդյունքում՝ ՀՀ Սահմանադրական դատարանը կարճել է համապատասխան գործի վարույթը՝ միևնույն ժամանակ արտահայտելով քննարկվող հիմնախնդրի համար առանցքային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ, որոնք ուղենիշային են դարձել նշված բնագավառում համարժեք իրավակիրառ պրակտիկայի ձևավորման տեսանկյունից[1]:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ չունենալով սահմանադրական վեճերի լուծման առանձին լիազորություն, ՀՀ Սահմանադրական դատարանը հաճախ անդրադարձել է նման վեճերի՝ դրանք քննարկելով և համապատասխան լուծումներ առաջարկելով իր այլ լիազորությունների իրացման շրջանակներում:

2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական վեճերի լուծման լիազորություն ամրագրվեց նաև ՀՀ սահմանադրական դատարանի համար: ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես, Սահմանադրական դատարանը օրենքով սահմանված կարգով՝ լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը: Իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածին համապատասխան՝ նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները: «Սահմանադրական դատարանի մասին» 17.01.2018թ. ՀՀ սահմանադրական օրենքն իր հերթին սահմանեց սահմանադրական դատարանի կողմից հիշյալ լիազորության իրականացման կարգը: Ուստի, հաշվի առնելով սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը երաշխավորելու տեսանկյունից սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի հաղթահարման սահմանադրական ճանապարհների առկայության ու դրանց պատշաճ իրացման կարևորությունը, հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ վերջիններիս առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Քննարկվող լիազորության էության ամբողջական բացահայտման համար անհրաժեշտ ենք համարում առաջին հերթին համեմատական վերլուծության ենթարկել ներկայացված սահմանադրական նորմերն ու «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված համապատասխան իրավակարգավորումները, քանզի հենց դրանք են

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 4 փետրվարի 2011թ. ՍԴՈ-934 որոշում:

ամրագրում նշված գործերի քննության առանձնահատկություններն ու հնարավորություն են տալիս լիարժեք պատկերացում ունենալու Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերի հաղթահարման իրավական ճանապարհների մասին: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածը, մասնավորապես, նախատեսում է.

«Հոդված 75. Սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերի քննությունը

1. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ Ազգային ժողովի և Ազգային ժողովի մարմինների սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով, Հանրապետության նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով:

2. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացվել վիճարկվող գործողությունը կատարելու, անգործության մասին հայտնի դառնալու կամ իրավական ակտն ընդունելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ կարող է հանդես գալ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը և Կառավարությունը:

4. Սույն հոդվածում նշված գործերով ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ պատասխանողի գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում:

5. Սույն հոդվածում նշված գործերով դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը կարող է իրականացվել բանավոր ընթացակարգով:

6. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

7. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

8. Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ ընդունված իրավական ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող.

2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ ընդունված իրավական ակտը՝ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր.

3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմնին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը:

9. Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում Սահմանադրական դատարանը գնահատում է նաև Սահմանադրությանը հակասող գործողության, անգործության

կամ իրավական ակտի հիմք հանդիսացող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի սահմանադրականությունը և, հանգելով դրա՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը, իրավասու է այդ նորմատիվ իրավական ակտը կամ դրա համապատասխան դրույթը ճանաչելու Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

Ներկայացված սահմանադրական և օրենսդրական կարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ նշված գործերով սահմանադրական արդարադատության օբյեկտ են հանդիսանում ***սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերը***: Ընդ որում՝ օրենսդրությունը, հստակեցնելով, թե կոնկրետ որ մարմինների միջև վեճերի մասին է խոսքը, այն է՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի, Հանրապետության նախագահի, Կառավարության, Բարձրագույն դատական խորհրդի և տեղական ինքնակառավարման մարմինների, միևնույն ժամանակ, ըստ էության, չի հստակեցնում նշված վեճերի բովանդակությունն ու դրան առնչվող առանձնահատկությունները:

Որոշ երկրներում, սակայն, հստակ օրենսդրական կարգավորում են ստացել այն հարցերը, թե որ դեպքերում և որ վեճերը կարող են քննարկման առարկա դառնալ սահմանադրական դատարանում: Լեհաստանի Սահմանադրական տրիբունալն, օրինակ, լուծում է իշխանության առնչությամբ առաջացող վեճերը, երբ՝

1) առնվազն երկու սահմանադրական մարմիններ իրենց իրավասու են համարում լուծելու միևնույն հարցը կամ որոշում են կայացրել այդ հարցով,

2) առնվազն երկու սահմանադրական մարմիններ կարծում են, որ իրենք չունեն կոնկրետ հարցը լուծելու իրավասություն[1]:

Նույն հանգամանքն արձանագրվում է նաև Ռումինիայի Սահմանադրական դատարանի կողմից նշված վեճերի քննության տեսանկյունից: Վերջինս, մասնավորապես, իրավասու է լուծել լիազորությունների հարցերով վեճերը ինչպես դրական վեճերի պարագայում, երբ երկու կամ ավելի պետական մարմիններ հայտարարում են, որ ունեն իրավասություն կարգավորելու կամ լուծելու միևնույն հարցը, այնպես էլ բացասական վեճերի դեպքում, երբ երկու կամ ավելի պետական մարմիններ մերժում են իրենց իրավասության առկայությունը կամ հրաժարվում են իրականացնել իրենց պարտականությունների համատեքստում ընդգրկվող որոշակի գործողություններ: Ավելին, Ռումինիայի Սահմանադրական դատարանը նշել է, որ սահմանադրական վեճերի բովանդակությունը վերաբերում է նաև այնպիսի վիճելի իրավական վիճակներին, որոնք ուղղակիորեն բխում են Սահմանադրությունից[2]:

«Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական մարմինների միջև վեճերի առնչությամբ դիմումները կարող են ընդունվել քննության, եթե դիմողը պնդում է, որ պատասխանողի գործողությունը կամ անգործությունը խախտում է Հիմնական օրենքով դիմողի կամ դիմողի մարմնի համար նախատեսված իրավունքները կամ պարտականությունները կամ դրանց խախտման ուղղակի վտանգ է

[1] «Սահմանադրական տրիբունալի կազմավորման և Սահմանադրական տրիբունալում գործերի քննության կարգի մասին» 30 նոյեմբերի 2016թ. Լեհաստանի Հանրապետության օրենքի 85 հոդված, http://trybunal.gov.pl/fileadmin/content/dokumenty/Akty_normatywne/The_Act_on_the_Organisation_of_the_Constitutional_Tribunal_and_the_Mode_of_Proceedings_Before_the_Constitutional_Tribunal_en.pdf: (Վերջին մուտք՝ 10.08.2018):

[2] Տե՛ս Simion M. Constitutional Legal Disputes between the President of Romania and Other Public Authorities in the Case-Law of the Constitutional Court of Romania // Agora International Journal of Juridical Sciences, N 2 (2017). Agora University Press, Oradea, Romania, էջ 89:

ստեղծում: Ավելին, նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ խոսքը հիշյալ վեճերի առկայության պարագայում Հիմնական օրենքի մեկնաբանություն տալու մասին է[1]:

«Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 37-րդ հոդվածի համաձայն ևս՝ պետական մարմինների կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների հարցով վեճերի առկայության պարագայում Սահմանադրական դատարանը լուծում է նշված վեճերը ***Հիմնական օրենքի մեկնաբանության հիման վրա***[2]:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ ներկայացվում են սահմանադրական վեճերի մի քանի հնարավոր դրսևորումներ՝ 1) երբ պետական մարմինը դուրս է գալիս իր իրավասության շրջանակներից և իրականացնում է այնպիսի լիազորություններ, որոնք ընդհանրապես չեն կարող իրականացվել հանրային իշխանության մարմնի կողմից, 2) երբ պետական մարմինն իրականացնում է այնպիսի լիազորություններ, որոնք ընդգրկված են այլ մարմնի իրավասության շրջանակներում, 3) երբ պետական մարմինը հրաժարվում է իր լիազորությունների իրականացումից[3]:

Հաշվի առնելով լիազորությունների հարցով վեճերի նշված դրսևորումները՝ գրականության մեջ ներկայացվում են դրանց հետևյալ տարատեսակները՝ 1) լիազորության ճանաչման հարցերով վեճեր, երբ պետական իշխանության համապատասխան մարմինը գտնում է, որ պետական իշխանության այլ մարմինների կողմից իրավական ակտի ընդունումը կամ իրավաբանական գործողության կատարումն ընդգրկված են իր իրավասության շրջանակներում, 2) լիազորության ժխտման հարցերով վեճեր, երբ պետական իշխանության համապատասխան մարմինը գտնում է, որ վիճելի լիազորությունները պետք է իրականացվեն այլ մարմինների կողմից, միևնույն ժամանակ, վերջիններս ևս ժխտում են հիշյալ բնագավառում իրենց լիազորությունները, 3) լիազորության յուրացման վերաբերյալ վեճեր, երբ պետական մարմինն ընդունում է իրավական ակտ կամ կատարում է գործողություն՝ դուրս գալով իր իրավասության շրջանակներից, 4) տարբեր պետական մարմինների իրավասության հակասությունների և համընկնումների վերաբերյալ վեճեր[4]:

Կարծում ենք, որ վերոշարադրյալ դասակարգումը նշանակություն ունի առավելապես սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի տեսական տարբերակման և դրանց գիտական հետազոտության առումով: Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, նման տարանջատման շրջանակներում վեճերի՝ ներկայացված մի շարք տարատեսակներ կարող են համընկնել: Օրինակ՝ տարբեր պետական մարմինների իրավասության հակասությունների և համընկնումների վերաբերյալ վեճերը կարող են իրենց էությամբ լինել լիազորության յուրացման կամ ճանաչման հարցով վեճեր և այլն: Ավելին, ակնհայտ է, որ գործնական տեսանկյունից առավել մեծ կարևորություն է ներկայացնում այն հարցադրումը, թե հիշյալ վեճերի առաջացման պարագայում վեճի առաջացման որ փուլում, ինչ պայմանների բավարարման դեպքում կարելի է դիմել Սահմանադրական դատարան կամ որ իրավիճակներում է հնարավոր խոսել սահմանադրական լիազորությունների հարցով վեճի առկայության մասին: Հետևաբար, հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ ներկայացված հարցադրումներին՝ դրանք վերլուծելով Հա-

[1] Տե՛ս http://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Gesetze/BVerfGG.pdf?_blob=publicationFile&v=10 (Վերջին մուտք՝ 10.08.2018):

[2] Տե՛ս https://hunconcourt.hu/act-on-the-cc/ (Վերջին մուտք՝ 10.08.2018):

[3] Տե՛ս Брежнев О. Споры о компетенции между органами власти как объект судебного конституционного контроля, https://www.zonazakona.ru/law/comments/479/ (Վերջին մուտք՝ 10.08.2018):

[4] Տե՛ս Тохян Ф. Роль и полномочия органов конституционного правосудия в решении компетенционных споров (практика Армении и международный опыт) // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջ 129-130:

յաստանի Հանրապետությունում առկա համապատասխան իրավակարգավորումների համատեքստում:

Ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի Հանրապետության պարագայում խոսքը սահմանադրական կոնկրետ մարմինների միջև վեճերի մասին է, որոնց բովանդակությունն ու առանձնահատկությունները բացահայտելու համար հարկ ենք համարում վերլուծել ՀՀ իրավակարգավորումների շրջանակներում օգտագործվող եզրութաբանությունը, ինչը, ներկայացված վերլուծության հետ մեկտեղ, թույլ է տալիս կատարել հարցի առնչությամբ որոշակի եզրահանգումներ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի՝ քննարկվող հիմնախնդրին առնչվող նորմերում անընդհատ օգտագործվում է «վիճարկվող գործողություն, անգործություն կամ իրավական ակտ» ձևակերպումը: Ավելին, սահմանադրական օրենքը նախատեսում է, որ նշված գործերով ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ ***պատասխանողի գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում***[1]: Իսկ Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ ընդունված իրավական ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, 2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ ընդունված իրավական ակտը՝ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմնին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը[2]:

Կարծում ենք, որ ներկայացված իրավակարգավորումներն ուղղակիորեն պատասխանում են սոսկ այն հարցին, որ նշված գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը Սահմանադրական դատարանում կարելի է վիճարկել, եթե այն խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում: Սակայն այդ համատեքստում էլ անպատասխան են մնում այն հարցադրումները, թե որ դեպքերում և որ փուլում դրանք կարող են վիճարկվել, որ գործողության, անգործության կամ իրավական ակտի մասին է խոսքը և որ դեպքում կարելի է խոսել սահմանադրական լիազորությունների հարցով վեճի առկայության մասին:

Ներկայացված նորմերի և առկա տեսական դոկտրինների համադրված վերլուծությունից կարելի է կատարել ներկայացված հարցադրումների վերաբերյալ որոշակի եզրահանգումներ: Դրանցից առաջինը վերաբերում է այն հնարավոր իրավիճակներին, որոնց պարագայում կարելի է խոսել սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի առկայության մասին: Մեր կարծիքով, նման վեճեր հնարավոր են, երբ՝ 1) սահմանադրական մարմինն իր ենթադրյալ սահմանադրական լիազորության իրացման արդյունքում խախտել է մեկ այլ սահմանադրական մարմնի սահմանադրական լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծել, 2) սահմանադրական մարմինն իր ենթադրյալ սահմանադրական լիազորության չիրացման արդյունքում խախտել է մեկ այլ սահմանադրական

[1] Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 4-րդ մաս:
[2] Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի 8-րդ մաս:

մարմնի սահմանադրական լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծել: Ընդ որում՝ կարծում ենք, որ հիշյալ համատեքստում հնարավոր են իրավիճակներ, երբ ինչպես մեկ սահմանադրական մարմին է իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում իրեն իրավասու համարում լուծելու կոնկրետ հարցը կամ իրավասու չի համարում լուծելու վերջինս, այնպես էլ, երբ առնվազն երկու սահմանադրական մարմիններ են իրենց սահմանադրական լիազորությունների շրջանակներում իրենց իրավասու համարում լուծելու կոնկրետ հարցը կամ իրավասու չեն համարում լուծելու վերջինս:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող հիմնախնդրի առումով կարևորություն ներկայացնող մեկ այլ հարցադրման: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը նշված գործերով վիճարկման ենթակա օբյեկտ է դիտարկում ինչպես գործողությունը, անգործությունը, այնպես էլ իրավական ակտը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես՝ «... 2. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացվել վիճարկվող գործողությունը կատարելու, անգործության մասին հայտնի դառնալու կամ ***իրավական ակտն ընդունելու*** օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում: ...:

4. Սույն հոդվածում նշված գործերով ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ պատասխանողի գործողությունը, անգործությունը կամ ***իրավական ակտը*** խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում: ...:

8. Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ ***ընդունված իրավական ակտը*** ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող.

2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ ***ընդունված իրավական ակտը***՝ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր.

3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմնին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը: ...»:

Ներկայացված նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ հիշյալ գործերի շրջանակներում սահմանադրական արդարադատության օբյեկտ կարող է հանդիսանալ ոչ միայն վիճարկվող լիազորության իրականացմամբ կատարված գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը, այլ նաև ընդունված իրավական ակտը:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ակտերի մեծամասնությունն ընդունվում է սահմանադրական մարմինների համապատասխան սահմանադրական լիազորությունների իրականացման արդյունքում, հարց է առաջանում այն մասին, թե ինչպես պետք է տարբերակվեն այն իրավիճակները, երբ Սահմանադրական դատարան է անհրաժեշտ դիմել իրավական ակտի սահմանադրականության հարցով, այն դեպքերից, երբ պետք է ներկայացվի սահմանադրական լիազորությունների հարցով վեճի լուծման առնչությամբ դիմում, երբ բարձրացվում է այդ լիազորության իրականացմամբ ընդունված իրավական ակտի սահմանադրականության խնդիր: Ակնհայտ է, որ նշված ան-

հստակությունը կարող է հանգեցնել նույնատիպ իրավիճակներում Սահմանադրական դատարանի տարբեր լիազորությունների իրացման առնչությամբ դիմումների ներկայացման, արդյունքում նաև՝ նույնատիպ հարցերի հետ կապված յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում տարբեր գործերի քննության համար նախատեսված առանձնահատկությունների գործադրման, ուստի նաև՝ այդ առնչությամբ հակասական պրակտիկայի ձևավորման:

Այդ առումով հարկ է նկատի ունենալ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը գործերի քննության և լուծման տարատեսակ առանձնահատկություններ է նախատեսում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրական դատարանի լիազորություններից յուրաքանչյուրի իրացման համար: Մասնավորապես, միմյանցից էականորեն տարբերվում են սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի քննության և լուծման և իրավական ակտերի, այսպես կոչված, «վերացական ու կոնկրետ վերահսկողության» առանձնահատկությունները: Եթե օրինակ՝ առաջինի պարագայում ապացուցման բեռը կրում է դիմող կողմը, ապա նույնը չի կարելի ասել երկրորդ իրավիճակում ապացուցման բեռի բաշխման մասին: Իրավական ակտերի վերացական վերահսկողության պարագայում դիմումի ընդունելիության պայման չի դիտարկվում գործի քննության առումով դիմողի շահագրգռվածության հիմնավորումը: Մինչդեռ, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածի՝ սահմանադրական վեճերի պարագայում ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ պատասխանողի գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում:

Միմյանցից էականորեն տարբերվում են նաև նշված գործերով ընդունվող որոշումների տարատեսակներն ու դրանց հետևանքները: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ «իրավական ակտերի վերացական վերահսկողության» արդյունքում Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, 2) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, 3) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին, 4) վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու և նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին: Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ «...: 13. Սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետում նշված որոշումը Սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ:

14. Սույն հոդվածի 13-րդ մասում նշված դեպքում Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում կատարված վարչական կամ դատական ակտերը կողմի դիմումի հիման վրա ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

15. Քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպ-

քում իրավական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից, իսկ դրա կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական, իսկ կողմի դիմումի հիման վրա՝ նաև վարչական ակտերը ենթակա են վերանայման օրենքով սահմանված կարգով:

16. Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե՝ 1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ 2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրահիրավական նշանակություն: ...»:

Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը. 1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ ընդունված իրավական ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, 2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ ընդունված իրավական ակտը՝ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմնին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ինչպես գործերի քննության և լուծման, այնպես էլ արդյունքում ընդունվող որոշումների ու դրանց հետևանքների տեսանկյունից քննարկվող երկու լիազորությունների միջև առկա են էական տարբերություններ: Ինչպես արդեն նշեցինք, այդ հանգամանքը կարող է հանգեցնել նույնատիպ իրավիճակներում Սահմանադրական դատարանի տարբեր լիազորությունների իրացման առնչությամբ դիմումների ներկայացման, արդյունքում նաև՝ նույնատիպ հարցերի հետ կապված յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում տարբեր գործերի քննության համար նախատեսված առանձնահատկությունների գործադրման, ուստի նաև՝ այդ առնչությամբ հակասական պրակտիկայի ձևավորման:

Հետևաբար, կարևոր ենք համարում հիմնախնդրի առնչությամբ միասնական մոտեցման և պրակտիկայի ձևավորումը: Այդ տեսանկյունից նպատակահարմար ենք համարում, որ բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական վեճը հնարավոր է լուծել Սահմանադրական դատարանի որևէ այլ լիազորության իրացման շրջանակներում, մասնավորապես, օրինակ, իրավական ակտերի վերացական վերահսկողության և այլն, դիմումը ներկայացվի և գործի քննությունն իրականացվի հենց այդ լիազորության համատեքստում և վերջինիս առանձնահատկությունները նկատի ունենալով: Մասնավորապես, մեր կարծիքով, երբ բարձրացվում է ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավական ակտերի սահմանադրականության խնդիր, նույնիսկ եթե համապատասխան ակտն ընդունվել է սահմանադրական մարմնի կողմից կոնկրետ սահմանադրական լիազորության իրացման արդյունքում, քննությունն անհրաժեշտ է իրականացնել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածով ամրագրված գործի շրջանակներում, այլ կերպ՝ «իրավական ակտերի վերացական վերահսկողության» համատեքստում:

Հետևաբար, կարծում ենք, որ ***հարցի առնչությամբ ընդհանուր լուծումն այն է, որ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի վերաբերյալ գործերի քննությունը բացառվի այն դեպքերում, երբ հարցի լուծումը հնարավոր է Սահմանադրական դատարանի այլ լիազորության իրացման շրջանակներում:***

Այդ առումով նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ դաշնային սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի համաձայն՝ իրավասության հարցով վեճերով պետական իշխանության մարմնի միջնորդությունը թույլատրելի է, եթե վեճը չէր լուծվել կամ չէր կարող լուծվել այլ կարգով: Սլովակիայի Հանրապետության Սահմանադրության 126-րդ հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական կառավարման կենտրոնական մարմինների միջև իրավասության հարցով վեճերը, եթե օրենքը չի նախատեսում, որ այս հարցերը լուծվում են այլ պետական մարմնի կողմից:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի մասնակիցներին և այդ առնչությամբ առկա հնարավոր խնդրահարույց հարցերին:

Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ Սահմանադրությունը հստակեցնում է այն սահմանադրական մարմինները, որոնք սահմանադրական լիազորությունների հարցով սահմանադրական վեճերով կարող են դիմել Սահմանադրական դատարան: Միևնույն ժամանակ, քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հետաքրքիր կարգավորում է ամրագրում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածը՝ տարբերակելով սահմանադրական վեճերի առնչությամբ գործերով դիմող և պատասխանող կողմերին: Մասնավորապես, սահմանադրական օրենքը որպես նշված գործերով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտներ հիշատակում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդին՝ Ազգային ժողովի և Ազգային ժողովի մարմինների սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով, Հանրապետության նախագահին, Կառավարությանը, Բարձրագույն դատական խորհրդին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված պատասխանող կողմի շրջանակը շատ ավելի նեղ է: Որպես այդպիսիք, մասնավորապես, կարող են հանդես գալ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը և Կառավարությունը: Ուստի, Բարձրագույն դատական խորհուրդն այն սահմանադրական մարմինն է, որը հիշյալ գործերով հնարավորություն ունենալով դիմելու Սահմանադրական դատարան, միևնույն ժամանակ, չի կարող ներգրավվել որպես պատասխանող կողմ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նշված խնդրի վերլուծությանն ու դրան առնչվող հարցադրումների քննարկմանը:

Առաջին հերթին նշենք, որ դատական իշխանություն իրականացնող կամ վերջինիս անկախությունը երաշխավորող մարմիններին որպես Սահմանադրական դատարանում քննության ենթակա սահմանադրական վեճերի կողմ դիտարկելու առնչությամբ միջազգային պրակտիկայում առկա են հետևյալ հիմնական մոտեցումները՝ 1) օրենսդրությամբ որպես սահմանադրական վեճի կողմ են դիտարկվում դատարանները, օրինակ՝ Սլովենիայում, Խորվաթիայում, 2) օրենսդրությամբ որպես սահմանադրական վեճի կողմ են դիտարկվում դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարմինները, օրինակ՝ Ռումինիայում, Իսպանիայում, Հայաստանի Հանրապետությունում, 3) հիշյալ մարմինները բացառված են սահմանադրական վեճերի կողմերի շրջանակից, օրինակ՝ Հունգարիայում: Միևնույն ժամանակ, կարևոր է նկատել, որ բոլոր այն վերոնշյալ երկրներում, որտեղ դատական իշխանություն իրականացնող կամ վերջինիս անկախությունը երաշխավորող մարմինները հանդես են գալիս որպես վեճի կողմ,

օրենսդրությունը տարբերակում չի նախատեսում նրանց կողմից դիմող կամ պատասխանող կողմ հանդես գալու հնարավորությունների առումով: Ավելին, առանձին երկրներում բավականին մեծ թիվ են կազմում Սահմանադրական դատարանում քննվող հենց այն սահմանադրական վեճերը, որոնց կողմ են հանդիսանում դատական իշխանության մարմինները, օրինակ՝ Սլովենիայում[1]:

Ինչ վերաբերում է ներկայացված հնարավոր մոդելներին, կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի առումով լավագույն տարբերակը դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարմիններին որպես վեճի կողմ դիտարկելն է, ինչը հնարավորություն է տալիս բացառելու դատական իշխանություն իրականացնող մարմիններին նշված վեճերի մեջ անմիջականորեն ներգրավելուց՝ միաժամանակ նախադրյալներ ստեղծելով վերջիններիս անկախությունը երաշխավորող մարմնի միջոցով սահմանադրական նման վեճերի պարագայում համարժեք իրավական լուծումներ գտնելու համար:

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը հիշյալ գործերով որպես պատասխանող կողմ չդիտարկելու հիմնական պատճառը, հավանաբար, դատարանների անկախությունը երաշխավորող նշված մարմնի նկատմամբ հնարավոր ավելորդ ազդեցությունները բացառելն է: Միջազգային-իրավական փաստաթղթերում բազմիցս արձանագրվել է, որ նմանատիպ մարմինները երաշխավորում են դատարանների և դատավորների անկախությունը, ուստի՝ իրենք էլ պետք է անկախ լինեն և զերծ իշխանության այլ մարմինների միջամտություններից[2]: Բարձրագույն դատական խորհուրդն օժտված է այնպիսի սահմանադրական լիազորություններով, ինչպիսիք են, օրինակ, դատավորների թեկնածուների ցուցակների կազմումն ու հաստատումը, դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և այլն, որոնց պարագայում վերջինս պետք է օժտված լինի լիակատար անկախությամբ: Մինչդեռ ակնհայտ է, որ նշված սահմանադրական լիազորությունների առնչությամբ սահմանադրական վեճի մեջ հիշյալ մարմնի ներգրավումը կամ դրա անընդհատ հավանականությունն ակնհայտորեն վտանգում են վերջինիս անկախությունն ու նրա սահմանադրական առաքելությունը ձևախեղելու հավանականություն են ստեղծում: Հետևաբար, այս տեսանկյունից Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերով պատասխանողների թվից բացառելու վերաբերյալ իրավակարգավորումը կարող է արդարացված դիտարկվել:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական կարգավորումները նախատեսում են մի շարք այնպիսի իրավիճակներ, երբ հիշյալ մարմինը ներգրավվում է սահմանադրական լիազորությունների առնչությամբ տարատեսակ այլ վեճերի շրջանակներում, այդ թվում՝ փաստացի հանդես գալով որպես գործով պատասխանող: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում (որոնք վերաբերում են Վճռաբեկ դատարանի դատավորների, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների նշանակմանը, երբ որպես առաջարկությամբ հանդես եկող մարմին է դիտարկվում Բարձրագույն դատական խորհուրդը) կարող

[1] Տե՛ս http://www.us-rs.si/en/case-law/search-3441/ (Վերջին մուտք՝ 10.08.2018):

[2] Տե՛ս OSCE/ODIHR Final Opinion on Draft Amendments to the Act on the National Council of the Judiciary and Certain Other Acts of Poland, Warsaw, 5 May 2017, https://www.osce.org/odihr/315946?download=true (Վերջին մուտք՝ 10.08.2018):

է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմնին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ ***դիմում է Սահմանադրական դատարան***: Ընդ որում՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ գործերով որպես պատասխանող դատավարությանը ներգրավվում է Հանրապետության նախագահին համապատասխան առաջարկություն ներկայացրած կամ միջնորդությամբ դիմած մարմինը: Հետևաբար, ակնհայտ է, որ նշված իրավիճակում ևս Բարձրագույն դատական խորհուրդը փաստացի ներգրավվում է իր կարևորագույն սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճի մեջ՝ ընդհուպ հանդես գալով որպես գործով պատասխանող[1]:

Ավելին, ՀՀ Սահմանադրության 168-րդ և 169-րդ հոդվածներում ևս խոսքը համապատասխան սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերի մասին է, և ըստ էության, որևէ խոսք չի գնում որպես դիմող կամ պատասխանող հանդես գալու հարցի առնչությամբ այդ մարմինները տարբերակելու հանգամանքի վերաբերյալ: Նույնիսկ եթե Բարձրագույն դատական խորհրդի առնչությամբ այլ սահմանադրական կարգավորումները, մասնավորապես, վերջինիս կարգավիճակը, լիազորությունների բնույթն ու դրանով պայմանավորված՝ անկախությունն ու հիշյալ մարմնի նկատմամբ ճնշումները բացառելու անհրաժեշտությունը, կարող են հիմք հանդիսանալ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերով վերջինիս՝ պատասխանող հանդես գալու հանգամանքը բացառելը հիմնավորելու համար, սակայն սահմանադրական ներկայացված այլ կարգավորումները, մասնավորապես՝ 139-րդ, 168-րդ, 169-րդ հոդվածները, ևս հուշում են, որ դրանց հիմքում չի դրվել Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի առումով պատասխանողների շարքից բացառելու տրամաբանությունը: Ավելին, կարծում ենք, որ հիշյալ գործերով որպես դիմող կողմ հանդես գալու դեպքում ևս քննարկվող մարմինը փաստացի ներգրավվում է սահմանադրական վեճի մեջ՝ չնայած այն հանգամանքին, որ տվյալ իրավիճակում շատ ավելի փոքր է վերջինիս անկախությունը սահմանափակելու և նրա սահմանադրական լիազորությունների իրացման վրա ազդեցություն գործելու հավանականությունը: Սակայն տվյալ պարագայում, մեր կարծիքով, առկա է խնդրահարույց մեկ այլ հանգամանք՝ այն, որ լիովին խաթարվում է Բարձրագույն դատական խորհրդի և այլ սահմանադրական մարմինների միջև փոխհարաբերությունների համաչափությունը, քննարկվող մարմինն անհամաչափ շահեկան դիրքում է հայտնվում բոլոր այլ մարմինների նկատմամբ և, ունենալով նման անհամաչափ շահեկան դիրք ու այլ սահմանադրական մարմիններին զսպող ու հակակշռող բազմաթիվ լիազորություններ՝ հիշյալ տեսանկյունից սկսում են լիովին բացակայել այլ մարմինների կողմից վերջինիս զսպող ու հակակշռող լիազորությունները:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ, թեև վեճի կողմ հանդիսանալու պարագայում առաջանում է Բարձրագույն դատական խորհրդի նկատմամբ ազդեցություն գործելու հնարավորություն, սակայն նման տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում նույն տեսակետը կարելի է հայտնել դատական իշխանություն իրականացնող կամ դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարմիններին առնչվող ցանկացած այլ գործի քննության առնչությամբ: Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ սահմանադրական մարմինների միջև իրենց սահմա-

[1] Նշված հարցերի քննությունն առանձնացված է սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերի քննությունից, և վերջինիս առանձնահատկություններն օրենքում ներկայացված են առանձին: Սակայն այդ հանգամանքը նշված գործի էությունը, որպես այդպիսին, չի փոխում, և փաստացի այս դեպքում էլ գործ ունենք սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճի հետ:

նադրական լիազորությունների առնչությամբ գործերի քննության պարագայում խոսքը սոսկ սահմանադրական հարցադրումների և սահմանադրական լիազորությունների քննարկման մասին է, մասնավորապես, համապատասխան գործողության, անգործության, իրավական ակտի, ներկայացված առաջարկության կամ միջնորդության սահմանադրականության: Այլ հարցադրումներ հիշյալ գործերի քննության շրջանակներում չեն կարող քննարկվել: Ավելին, ակնհայտ է, որ հիշյալ գործերը քննության են ենթակա դատական իշխանություն իրականացնող մարմնի, մասնավորապես, Սահմանադրական դատարանի կողմից, ինչը ենթադրում է արդարադատությանը բնորոշ բոլոր սկզբունքների և չափանիշների պահպանում:

Հավելենք նաև, որ միջազգային-իրավական փաստաթղթերում լայնորեն քննարկվում են Բարձրագույն դատական խորհրդի առանձին որոշումների բողոքարկման անհրաժեշտությանն առնչվող հարցերը, մասնավորապես, ընդգծվում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ որոշումներն անկախ դատարանում բողոքարկելու կառուցակարգերի առկայության անհրաժեշտությունը[1]: «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածն էլ նախատեսում է, որ որոշակի հարցերի առնչությամբ Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնց սահմանադրականությունը, ըստ ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի[2] տրամաբանության, կարող է վիճարկվել Սահմանադրական դատարանում:

Հիշյալ համատեքստում հարկ է նաև նկատի ունենալ, որ Բարձրագույն դատական խորհուրդների գործունեության հիմքում դրված հիմնական միջազգային-իրավական չափանիշն այն է, որ վերջիններս պետք է ***որոշիչ ազդեցություն*** ունենան դատավորների նշանակման, ծառայողական առաջխաղացման և կարգապահական պատասխանատվության հարցերում[3]: Ավելին, նշված բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության առնչությամբ ներկայացված կարծիքներում, հստակորեն արձանագրվում է, որ քննարկվող հարցերի առնչությամբ Հանրապետության նախագահը չի կարող Բարձրագույն դատական խորհրդի կողմից ներկայացված թեկնածուին մերժելու իր լիազորությունն իրացնել սոսկ այն պատճառով, որ կասկածներ ունի թեկնածուի որակների առնչությամբ: Նա այս լիազորությունը կարող է իրացնել միայն բացառիկ իրավիճակներում՝ ընտրության ընթացակարգերի կոպիտ խախտումների կամ թեկնածուի կողմից դատավորի կարգավիճակին ձևական պահանջների առումով ակնհայտ անհամապատասխանության պարագայում[4]: ՀՀ սահմանադրական և օրենսդրական ներկայացված կարգավորումների վերլուծությունը, մեր կարծիքով, վկայում է, որ դրանց հիմքում, ըստ էության, դրված է

[1] Տե՛ս CDL-AD(2007)028, Judicial Appointments // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29028-e, (Վերջին մուտք՝ 10.08.2018), CDL-AD(2017)019, Draft Judicial Code // Opinion adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017), http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e, (Վերջին մուտք՝ 10.08. 2018):

[2] ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը, Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով, որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ***ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի*** համապատասխանությունը Սահմանադրությանը:

[3] Տե՛ս CDL-AD(2007)028, Judicial Appointments // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29028-e, (Վերջին մուտք՝ 10.08. 2018):, CDL-AD(2010)004, The Independence of the Judicial System Part I: The Independence of Judges // Report adopted by the Venice Commission at its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010):

[4] Տե՛ս CDL-AD(2017)019, Draft Judicial Code // Opinion adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017), http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e, (Վերջին մուտք՝ 10.08. 2018):

հենց նշված տրամաբանությունը, ինչը բացառում է այդ նորմերի այլ կերպ մեկնաբանումն ու իրացումը:

Հիշյալ համատեքստում ակնհայտ է դառնում, որ նույնիսկ եթե Բարձրագույն դատական խորհուրդը հանդես գա որպես սահմանադրական լիազորությունների հարցով վեճի պատասխանող կողմ, այդ գործի շրջանակներում կարող է քննվել բացառապես համապատասխան գործողության, անգործության կամ ակտի սահմանադրականությանը վերաբերող հարցադրում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ սահմանադրական վեճերի լուծման քաղաքակիրթ ճանապարհն իրավական հարթությունում դրանց հաղթահարման հնարավորությունն է: Հետևաբար, սահմանադրական կայունության և կայուն ժողովրդավարության երաշխավորման տեսանկյունից բացառիկ կարևորություն է ձեռք բերում Սահմանադրական դատարանում նշված գործերի քննության համարժեք կառուցակարգերի արմատավորումն ու զարգացումը:

Annotation: The article considers issues regarding legal mechanisms of overcoming constitutional conflicts. The author's viewpoint is presented on the notion and content of the latter. The author substantiates that the civilized method for the solution of the mentioned conflicts is their overcoming in legal dimension. This, in its turn, presupposes determination and realization of corresponding mechanisms of consideration of the mentioned cases at the Constitutional Court.

Аннотация: В статье рассматриваются вопросы относительно правовых механизмов преодоления конституционных конфликтов, представляется авторский подход к понятию и содержанию последних. Автор обосновывает, что цивилизованным методом разрешения подобных споров является их преодоление в правовом пространстве. Это, в свою очередь, предполагает правовое предусмотрение и реализацию соответствующих механизмов рассмотрения указанных дел в Конституционном Суде.

Հիմնաբառեր՝ սահմանադրական մարմիններ, սահմանադրական վեճեր, սահմանադրական լիազորություններ, Սահմանադրական դատարան:

Keywords: constitutional bodies, constitutional conflicts, constitutional authorities, Constitutional Court.

Ключевые слова: конституционные органы, конституционные споры, конституционные полномочия, Конституционный Суд.